

«ՄԱՐՍՈՒՌՆԵՐ» Ժողովածու (1905)

ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՔ

Կը ձոնեմ խորին երախտագիտությամբ Մուրատ և Ռափայել
բարերարներու անմահ հիշատակին

ՄՈՒՍԱՅԻՆ

–«Թներս, ուղիղ դեպի բարձունքդ վըսեմ՝
Քնարըդ կ'ուզեն, կ'ուզեն քընարդ. երկընցո՛ւր:
Կը տրոփե մեջս երգերու սաղմն. կը սպասեմ,
Ե՛րբ պիտ' տըրվի անոր ծնուցիչ քու համբույր:
Երգե՛լ կ'ուզեմ. թող սարսըռա բընությունն
Մատերուս տակ, ինչպես մոր ծիծն հոլանի՝
Մանկան առջի բընագղական դրպչելուն.
Եվ կյանքը թող շըրթունքիս վրա լուծանի:
Երգե՛լ կ'ուզեմ. որոտներն ի՞նչ կ'ըսեն մեզ,
Կ'առնե խոսք մ'հովն ամպեն, հովեն ալ՝ ջաղաց,
Բա՛ռ ունի աստղն. երգել, երգե՛լ կ'ուզեմ ես,
Ձի կը խոսին երգով Բնությունն ու Աստված:
Կ'ուզեմ ծովուն հետ սիրտ սըրտի ես հարիլ,
Իմ անհունիս մեջ այդ անհունը թաղել,
Բուռն իղձն ունիմ մըրըրկին հետ մաքառիլ,
Եվ գուլիս՝ Էին գաղտնիքներուն դեմ բախել:
Գըրված է Սերն՝ վարդին, Հավատքն՝ աստղին վրա,
Զանոնք հեզել կ'ուզեմ քընարի շըրթունքով,
Կ'ուզեմ բնությունն հորինել քող մը ծաղկյա՝
Մտածման ամեն ձև իր ներքն քողելով:
Տո՛ւր, ո՛վ Մուսա, տո՛ւր այդ քընարըդ բըռնած,
Պիտ՝ իմին սիրտս, իմին աշխարհս ըլլա ան՝
Ուր գաղափարն պիտի բնակի զերդ Աստված,
Վեհ գաղափարն աչքերով բո՛ց, թռիչքով լա՛յն:
Անոր վըրա պիտի հալի խանդն հոգվույս,
Անոր վըրա պիտի սիրտս հար քըրտընի,
Ինչպես կարմիր և սարսըռուն արշալո՛ւյս
Մը՝ սեզերուն, հասկերուն վրա գարունի:
Պիտի այդ քնարը կապե իմ շըրթներուն
Ժողովուրդին շըրթունքը հուր, սիրագին,
Եվ պիտի այդ համբույրն ըլլա բուռն, անհուն,
Համբույրին պես՝ տըրված ծովեն եզերքին:

Երգերն անոր պիտի պատմեն *Մարտուններ՝*
 Մարմնավորված իմ արյունես, շարժումես,
 Ներշնչելով տողեր, թուշի ակուններ,
 Ուր, հողմակոծ, պիտ' ծըլի վիշտն աղեկեզ:
 Պիտի մռնչեն գարհուրանքները կյանքին՝
 Մե՛ ջը սուգած՝ արդարության, բարության.
 Մըրբագա՛ն քնար, պիտ' լարերն իր մըկըրտվին՝
 Մարտիրոսված եղբայրության ավազանն:
 Ո՛վ սուրբ Մուսա, Մուսա մատաղ, լանջաբաց,
 Կարծես դու նո՛ր ձրգած աստղե օրոցքդ հուր.
 Ո՛վ վարդ կույս, դո՛ւ, ժողովուրդին խոստացված,
 Լայն սերերո՞ւ դու խոստացված քնարըդ տո՛ւր:
 Երիտասարդ՝ բայց շուտ ճանչցած շատ բաներ՝
 Գիրկը՛դ կու գամ երագելու առանձին.
 Մեկդի թողած եմ, ժըպիտ, խաղ ու պարեր,
 Նորընծա եմ գաղափարի աշխարհին:
 Թներս, ուղիղ դեպի բարձունքըդ վըսեմ՝
 Քնարըդ կ'ուզեն, կ'ուզեն քընարդ. երկընցո՛ւր:
 Կը տրոփե մեջս երգերու սաղմն. կը սպասեմ,
 Ե՛րբ պիտ' տըրվի անոր ծնուցիչ քու համբույր»:
 Այսպես ըսի: Եվ պատասխանն աղեկեզ՝
 Մուսան՝ վերեն հովին հանձնեց դեպ ինձի.
 –«Տենչիդ ըզգո՛ւյշ, այս քընարս է շինված, տե՛ս,
 Մն նոճիե, փթթում մահվան ավիշի:
 Թըշվա՛ն հոգի, անոր լարերն են բերված
 Փետրոտըված գանգուրներեն որբերուն.
 Կ'երթան երգերն, հեհեալով, սըրընթաց,
 Ուր որ կ'երթա ոտքը բոպիկ՝ խեղճությունն:
 Հեռո՛ւ ասկե. գիտցած ըլլաս՝ որ այս քնար՝
 Քամահրանքով պիտ' անտեսեն ձերիններ.
 Զի օտարին ոսկվո՛ւյն քով իսկ՝ ձեր գոհար՝
 Աչքերնուդ շո՛ղ մըն ալ, ըստեպ, չի ցայտեր:
 Պիտի գոցե իրենց ալիքը բուստերդ,
 Եվ փուշերու, եղիճներու մոխիրով
 Պիտի թաղեն կայծերն հոգվույդ բոցակերտ՝
 Նըվագներուդ ողբը քեզի՛ դարձնելով:
 Հեռատեսե՛. ապագադ խիստ մըթին է.
 Հեռատեսե՛. գերեզման մ'է ապագադ.
 Խանձարուրեդ պիտի օրոցք մը չելլե.
 Պիտ' չը գըտնես միջոց թռիչքիդ համեմատ:
 Ժողովուրդի՛ն ըլլալ կ'ուզես մո՛րոց չեղած.
 Ծնողքիդ արցունքը քու դարձիդ կը սպասե.
 Արևմուտքի մեջ ծաղիկներդ ընձյուղած
 Պիտի խորշակն Արևելքի ազագե:
 Մըտածումի, ըզգացումի այս ճամբուն՝
 Խընդի արևը չէ սըփռած իր շեկ բաշ.

Հոն կը շըրջի Աբովյանի մ'հեզ ուրուն,
Հոն Դուրյանն է լացած, տըխրած Պեշիկթաշ:
Ինչ կ'ուզես քնա՛րն, որուն շանթերը մեջի՛
Պիտի հաճո չը մըռնչեն շատերուն.
Որուն վրայի քողն է սև քող մը խեղճի,
Թեպետ ըլլա մեջն արշալույս մը շողուն:
Ինչ, այս քնա՛րը կ'ուզես, քնար սև փայտե՛.
Այս՝ վերքերու գործի մըն է, այս է հուր.
Ապագադ է, այս՝ դագաղդ է, անո՛ւնդ է»:
Ես, անհողողողդ, ըսի անոր.
– Ըլլա՛, տո՛ւր:

ՀԱՅՐ, ՕՐՀՆԵ՛

Հայր իմ, օրհնե՛. ժամը հասավ. պիտ' երթամ.
Նոր կյա՛նք մի՛նձի կը սպասե՞
Պատանությունն ես թողուցի, նոր արյուն
Երակիս մեջ կը վազե՞

Հառա՛ջ, հառա՛ջ, գըլուխս ետ չե՛մ դարձըներ.
Երկընճես վա՛ր թող իյնան
Անվիշտ կյանքիս ամեն աստղեր, հոգըս չե՛.
Անցյալս իջնա թող դամբան՞

Օհ, ինձի՛ ինչ թե կը փետեմ վարդին թերթ,
Եվ փուշին կյանք կու տամ միշտ,
Թե գըրկաբաց հորձանքին մեջ կը նետվեմ.
Խինդս է՛ ձանձրույթ, սերս է՛ վիշտ՞

Ամեն խայտանք ջախջախեցի սըրտիս մեջ.
Չեմ վախնար սև ծըծելե.
Վանք մըտնող կույս մեմ՝ որ խըզված իր վարսեր
Անխիղճ, անհոգ, կը դիտե՛ ...

Հա՛յր, ես կ'երթամ այն ճամբայեն՝ որ ճերմակ
Մազերուդ զիս կը տանի,
Վաստակաբեկ ոսկըրներուդ, ծեր սըրտիդ
Եվ սերերուդ կենդանի....

Բավական է. - աշխատեցար, կըրեցիր,
Ամեն նետի, հարվածի
Վահան եղար ինձի համար. հոգիդ է՛
Որ հոգվույս մեջ կը հաճի՞

Իմ արյունս է գոյացած քու քըրտինքեդ.
Հոգնությանդ ծիլն եմ տըխուր՞

Հոգիդ, կաղնի՛, երբ կուրծք կու տար մըրըրկին՝
Ես շուքին տակ, հանգիստ, լուռ

Կը մեծնայի: — Հարկ է հիմա ա՛լ հանգչես
Եվ ես քեզի հաջորդեմ...
Խոնջե՛ նք, խոնջե՛ նք, կուգեմ կըրվիլ, աշխատիլ,
Ելլել կյանքին, կյանքին դեմ...

Հայր իմ, օրհնե՛. դողողոջ ձեռքերդ գըլխուս դիր.
Թող մատերեդ կաթի վար
Աղոթքդ՝ եկած հոգվույդ պայծառ խորանեն՞
Վերջին ժամն է. օրհնե՛, հայր՞

ՁՅՈՒՆԵ ԴԱԳԱՂԸ

Հոս կը պատկի: Ոսկե ձեղուն չը կա վրան.
Եվ պատեր պերճ, դիպակագարդ, անասան՝
Ցուրտը դըրսի՛ ներսի տաքեն չեն բաժներ
Նըկարներե նըկար մրափուն իր աչքեր
Հեշտ երազի մ՛ետներն չեն թափառիր.
Եռոտանվույն վըրա հալվեն չի վառիր:
Հոս կը պատկի: Քուն մըն է այդ՝ որ երբեք
Պիտ՝ չը բանա իր այդ գոցած աչքերն հեզ.
Գիշեր մըն է՝ որուն արգանդը մութի
Պիտ՝ չհրդանա արշալույս մ՛իսկ՝ որ փըթթի:
Ան իր գըլուխն հըռըլտյունտ վ՛ վար դըրավ,
Եվ աղոթքով ալ պիտի վեր չառնե բնավ:
Երեկի ձյունն անոր դագաղ մ՛է ճերմակ,
Այսօրվան ձյունն ալ՝ կափարիչ մ՛ըսպիտակ.
Բնությունն ուզեց այդ մարմնույն մերժըված
Պատըսպարան մը նըվիրել, ո՛հ, առա՛ նց
Մըտածելու թե գերեզման մը կու տա:
Հե՛ գ մոլորված, սա գինետան մոտակա
Դըռներն ելավ, և անգիտակ, խոլ, ինքնին,
Ինկավ դըրան առջևը սա պալատին:
Արբեցած էր: Ձյունի մեջ ըլլա լը չըզգաց.
Հոս չը կար վիշտ, չը կար լալունը մանկան,
Եվ ողբը մոր ա՛լ անկարող դիեցման.
Չը կար խեղդուկ ձեղուն, խավար և բորբոս,
Չը կա մըրուրն առկայծ ճրագին. լավ էր հոս:
Լա վ՛ էր այստեղ:
Սառ բուրգին տակ եղավ սառ,
Եվ սա քարե սեմին վըրա եղավ քար,
Հոն դընելով ահռելությունը կյանքին.
Եվ իր ուրուն պտըտցնելով՝ ներսն հեշտին

Ննջողներուն երագին մեջ, իբր օձ մի՝
Որ զինք ճընշող գավազանին կ'ողորտի:
Ա լ բնությունն այս իր խորթ որդին ընկեցիկ
Մոռացոնքի մեջ թող պատե. թող մարդիկ
Վաղն՝ այս իրենց խեղճ աքացածը տանին
Լըռության ծոցն – երկրորդ աշխա ըհը մերին –
Երագանքի համար է մեր օրորանն,
Ու անկողինն՝ հույզի, շիրիմն՝ լըռության...
Դեմքն հեզնությամբ մը դարձած է երկրնքին՝
Ուրկե շող մ'իսկ չինկավ անդունդն իր կյանքին.
Ուրկե խուսած մեկ կաթիլ մ'իսկ կապտագույն՝
Չը միացավ իր օվկիան սներուն.
Մինչ շատերուն անծիր գըմբե թ խընդության,
Իրեն համար նեղ առաստաղ մ'եղավ ան.
Եվ չը սըփռեց լույս մ'իբ քայլին այցելու՝
Որ, մոլորած, կ'երթար եղտյունն ախտերու,
Այդ երկինքն, ո՛հ, տըվավ անոր օրերուն
Սն հյուղ մը լոկ, և դիակին՝ ճերմակ ձյունն:
... Պիտի փայլի վաղն արեգակն անոր վրա,
Այդ մեծ ճըրագն՝ որ կույր երկրիս լույս կու տա.
Եվ պիտի ձյո՛ւնը շողշողա ցուրտ մարմնույն՝
Պըտույտքելով անոր դեռ սև՝ մագերուն,
Ինչպես ճերմակ եղյամն հովեն կը թըրթռա՝
Սն վեհությամբ կանգուն նոճի մը վըրա:
Վաղը, ժողվված վառարանի մը չորս դին
Մինչդեռ ժըպտով մը որդիներն հարուստին
Գիրկերե գիրկ պիտի կայտռեն, – ըստորև,
Հոն հյուղին մեջ, ցուրտ անկողնի մը առջև՝
Որ դատարկ է, խեղճին տըղաքն անխնա
Պիտի ճըվան. «Հայրի կն, հայրիկը չը կա»:
Ո՛վ լըքվածներ փոքրիկ, նոթի, ցըրտահար,
Պիտի այլև՛ ըս չը դառնա ձերին հայր.
Թերևս առանց ողբացվելու ձեզմե՝ զայն
Փութկոտորեն մոռացումի հողին տան.
Զի մարդըս այնքա՛ն կը շտապե՝ մեջտեղեն
Վերցընելու իրեն նըմանը արդեն:
Ան հոն է, հեռո՛ւն մեծ տան մը սեմին՝
Ա՛լ անկենդան տարածված է իր մարմինն:
Հոն սըգավոր աչք մ'իսկ չը կա՝ որ զինք լա.
Դագաղի ծածքը սև չիյնար իր վըրա:
Հավերժորեն գիշերն իջավ ծոցին մեջ.
Թույլ երակները չունին ա լ ելևեջ.
Յուրտն իր ներսի՝ դուրսի ցուրտին միացած՝
Խեղճն ըրին մարդ մը սառույցե հորինված.
Սն քուրջերուն, կընճիռներուն մեջ ճակտին
Կը քընանա կարծես սոսկումն ահագին.

Կե՛ս բաց շրթներն (ձյունն ակոս դեմքին վրա)
 Կ՛ըսեն կարծես. «Ինձ գերեզմա՞ն մ՛ալ չը կա»:
 Պիտի բացվին դրոներն հիմա պալատին.
 Պիտ՛ միանա ծիծաղ մ՛հիմակ այս սուգին:
 Ոտքի ծայրով՝ դիակը ցուրտ վըշտակիր՝
 Պիտի շարժեն և պիտ՛ ըսեն. «Արթընցի ր»:
 Եվ իր գըլուխն աստիճանեն մարմարյա
 Սալհատակին քարին, անշունչ, պիտ՛ իյնա...
 (Ո՛հ, ո՛վ Տեր իմ, Տեր անայլայլ, անվըրդով,
 Է՞ր կը փըշրես ալիքն՝ եկող ալիքով.
 Է՞ր կը հանձնես տերևը՝ գուժ մըրըրկին,
 Լերան ավազն՝ հեղեղներուն մուլեզին.
 Է՞ր կը մատնես մարդը՝ մարդուն կեղեքման
 Եվ հեզ ճակատը՝ ոտքերու հաղթական):
 Օ՛ն, արթընցի ր: Եվ պիտի ան նընջե դեռ:
 Պիտի ըսեն. «Հողին տըվեք, չը խըմե՛ր»:
 Ի՛նչ, չը խըմե՛ր: Ոճիր մ՛է այդպե՛ս խորհիլ
 Դատաստան մ՛է քարե սըրտի, մըտքի շիլ:
 Մենք, անձնապուրծ, նավուն վըրա ջըրհերձիկ՝
 Անոր համար ուսման լաստ մ՛իսկ փըշրեցինք,
 Եվ արդ կ՛ապշինք չը գըտնելնուս համար գայն՝
 Հոս, ծովեզերքն ազատության, փըրկության:
 Անգետ մանուկ մ՛էր առաջ՝ որ ամեն
 Մեր անարդար թողլըումի շարժումեն՝
 Սահմոտկելով իջավ դեպի ցուրտ պատրանք.
 Ու երեկվան հեզ մերժվածն (այս գիտնա՛ք)
 Այսօրվան կույր կորսըվածն է՝ գոր կ՛ատեն:
 Այն նոթի տղան՝ որ կը վըռնտվեր մեր դրոներն՝
 Այս մուրրած մարդն է, որ մեր սեմին վրա՝
 Կը դառնա Կրեժը սըրբազան և հըսկա:
 Ան՝ մեր հրածն է, որ խոցոտ քա՛ն թե գինով,
 Հոս տեղ ինկա՛վ, պատե ի պատ երթալով:
 Ի՛նչ, մաքրափայլ շիթը պըղտոր ուղիսին վրա
 Կը կաթեցնեք և կ՛ուզեք ալ պայծա՛ռ մնա:
 Թարմ տունկին չե՛ք տար ոռոգումն կենսական,
 Սյուքի համբույրն, լույսի հեղե՛ղը գարնան,
 Եվ կ՛ուզեք ալ՝ որ հողմնավար, ազագուն,
 Անցքին վըրա չը կառչի՞՞ ձեր ոտքերուն:
 Աղքատությունն ըզմարդ կ՛ընե ախտավոր.
 Բյուր գինովին ինն հազարն են չըքավոր:
 Զիրենք մոռցող աշխարհն մոռնալ կը ճըզնին՝
 Ալքուլի մեջ խեղդելով կյանքը վըշտին:
 Կ՛ուզեն իրենց հառաչին մեջ ու լըքման,
 Եվ լացին խորն իրենց կընոջ և մանկան՝
 Գտնել ցնորքի մը երազներն սատապե
 Եվ խինդ մ՛որ թույլ ուղեղը լոկ կը խաբե՛ :

Կ'ուզենք քողեր ձրգել իրենց աչքերուն՝
Որ չը կարդան ճակատագրին տողն-արյուն,
Որ չը տեսնեն մրռնչող ալիքն ոտքի տակ,
Եվ գրվա՞ստ վրա՞ գիշերվան սևն այլանդակ.
Որ չը տեսնեն նույնիսկ գիրե՛նք, սև՛ թաղված
Կիսով չափ խո՛րը դամբանի մ'մըթամած,
Նման լացող ուռենիի մ'որ, տըկար,
Կ'իջեցընէ գրվուխը մութ վըհեն վար:
Եվ այսպէս, ո՛հ, նըման շուքին, սարսուղին՝
Հորիզոնէն դողողըղալով կը սահին:
Զիրենք հիշող լոկ կը ձրգեն, մերկ, անտեր,
Խոնավ հողին մեջ վիժած, փո՛քր անդամներ.
Տալով (տխո՛ւր ժառանգ՝ որ միշտ կը մընա)
Իրենց անցյալն՝ անոնց իբրև ապագա:
Կ'երթա՛ն, կ'երթան փուշի մեջէ և ձյունի.
Փուշին վըրա կը սըրսկեն շիթն արյունի
Բաց վերքերէ, և ձյունին վրա կը թողուն
Կաղապարներն իրենց նիհար, ցուրտ մարմնույն:
Կ'անցնի՛ն, կ'անցնի՛ն մութի մեջէ, եղյամի,
Հուսալով միշտ հանգըստությունը շիրմի...
Մինչ դո՛ւ, ո՛վ մարդ, պատուհանիդ առջև, գոհ,
Կը ժըպտիս ցուրտ պըստույտքներու ձյունին... ո՛հ,
Անոնք, անգետ, կը ծածկեն, հո՛ն, քիչ մ'հեռուն,
Մարմի՛նն եղբորդ՝ որ կը հըծծէ. – Գըթուրթո՛ւն:

ԴԱՍՏԻԱՐԱԿ

Դաստիարակն է: Կը խոսի ծանր, հըստակ.
Զայնն աստղերեն, լույսեն կու գա:
Բառը կ'ելլէ, թըռիչքներուն վրա հուր կա.
Զայն կ'արձակեն իրենց բույնէն գիրքն ու կյանք:
Թոք կը սպառէ, միտք կը լըկէ, շունչ կու տա,
Եվ չի խորհիր իր վերքերուն.
Մանկության դեմ դըրած ամբողջ ծերությունն՝
Կը բաժնէ իր ծովը բագում լըճի վըրա...
Վըսէ՛մ կոչում: Հոգյակներու մեջ հըլու,
Ըզգուշավոր հըպումներով՝
Կը գըրէ գութն էջերու վրա ապահով,
Կը ցանէ սերն՝ անձնվիրություն քաղելու:
Անոնց կոկոն ուղեղին մեջ կիսաբաց
Կը գետեղէ ճառագայթներ,
Եվ կը լեցնէ խավարն անոր՝ բարեբեր
Իր գիտությունն Աստուծո մե՛ջ ամփոփած:
Եվ հավաքած ամանին շուրջն իր սըրտին
Մանկան շըրթներ՝ որք կը ծըծեն,

Կը բաշխե, հեզ, անոնց արյուն արյունեն.
Այդ իր կյանքն է՝ որ կ'անցընե ուրիշին:
Եվ այսպես օր մ'երբոր ըլլա գոհ մը, ծեր,
Մեռնելու մոտ և հոգեվարք,
Պիտ՝ մընա լոկ անոր այս մեծ մխիթարանք՝
Թե՛ իր կյանքն իր սաներուն մեջ կ'ապրի՝ դեռ:

ՀԱՇԻՇ

Միրտը լեցուն է բանտին խավարով.
Ա՛լ դաշտ ու երկինք չը կան իր համար.
Պիտ՝ գընեք աչքի հազար գոհարով՝
Աստղը ման նույն իսկ՝ ասուպ ալ ըլլար:

-«Օ՛ն, հաշիշ բերեք, կը մըրմընջե ան,
Երբ աշխարհս ինձմե այսպես կ'ապշոպեն,
Ես կ'ուզեմ հոգվույս մեջ ըստեղծել զայն:-
Օրորվիլ, բուժի՛լ հըզոր ցընորքեն:

Օ՛ն, հաշիշ բերեք»²- Եվ ան կը ծըխե,
Իբր ուրախության ըստի՛նքը ծըծեր.
Կը հոսի երազ ջըլերուն մեջե.
Աշխարհը լուծված կ'ելլա սիրտն ի վեր:

Աչքերը բանտին դիմաց կը գոցվին՝
Ապարանք մ'իր մեջ գըտնելու համար.
Բիբերն հըրաժեշտ կու տան խավարին՝
Աստղեր բերելու խոստումով ճարտար:

Եվ կը քընանա՛ արվեստի քընով՝
Ինչպես խըղճի խայթն՝ աղոթքե մը վերջ.
Ո՛վ թըշվառ հոգի, հիմա ապահով,
Ազատ է և տեր՝ ցընորքներուն մեջ.

Եվ կ'երագե շա՛տ, շատ բաներ աղվոր
Կամ հուրիներն ալ աղվոր կ'երագե.-
Բըռնած շըղթայի մ'օղակն ահավոր՝
Կընոջ մը մանյակը զայն կը կարծե:

Վարդե, ոսկիե գետի մ'ափն ի վար
Իր մանկան խաղին կը ժըպտի հիմա.
Կամ ինքն իսկ մանուկ՝ լըճակին մեջ հար
Երկինքն՝ երկընքին մեջ զինք կը տեսնա:

Շըրթունքները լուռ, մեղմիկ կը դողան՝

Անշուշտ ուրիշներ գրտնալնուն համար.
Թերևս (ո՞վ գիտե) կը լըրացնե ան
Համբույր մատենով թողված կիսկատար:

Կամ կը շըրջի արտն՝ ազատ քայլերով.
Կը վայլե երկինքն, աստղերու արգանդ:
Մի՛ արթընցընեք, քանզի ապահով
Զինք կը փոխադրեք լույս աշխարհեն՝ բանտ:

Թողեք քրնանա... թող հաշիշին մեջ
Սև շըղթան բեկտի՝ վիշտը լուծելով,
... Ո՞վ անմահ մեկոն, երազի առեջ,
Դու ցընորքն հյուսե ոսկեղեն թելով.

Հյուսե խընդություն մը անըրջական
Իր խոցված հոգվույն, ուղեղին վըրա.
Ժըպիտն աղվո ր է, եթե նույն իսկ ան
Խաբված ջըղերու վիժա՛ծն ալ ըլլա՞

ՏՂԱ՛Ք, ՆԵՐԵՑԵՔ

Մի՛, մի՛ ծեծեք: Ի՛նչ, խառնակե՞ց ձերին խաղ.
Կամ թե անգետ և դիպվածով, մըտազբաղ,
Ձեր գընդակի՞ն՝ զարկավ ոտքով մեկեն մեկ.
Թափե՞ց մելանը թուղթներուդ. – Ներեցեք:
Ո՛հ, ներեցեք, զի հայ մըն է, մեր եղբայր.
Ո՛հ, ներեցեք, զի տըկար է, ցավազար.
Բնությունը այդ խեղճ էակն է անտեսեր.
Չէ թափած իր կազդուրող հյուրն և ուժեր՝
Անոր մարմնույն, և իր բոցերն՝ հոգիին.
Կույր կ'է եղած անոր, մինչդեռ դայակ մ'հին
Ձեզ շատերուդ: Սուգի շիթ մ'է այդ տըղան՝
Որ եկավ հոս՝ մեր լուտանքին, նենգության
Մեջ ընելու իր սև շըրջանն արցունքով.
Թողեք այդ աստղը, հանդարտիկ, անվըրդով,
Իր հորիզոն իջնե, առանց զանիկա
Ասուպ՝ նելու, թեպետ արև ալ չըլլա:
Թըշվա՛ն ծաղիկ գերեզմանի, տըխրության,
Ո՛հ, փոթորկե փոթորիկ մի՛ հուզեք զայն,
Այսինքըն՝ իտլ բարկութենե բարկություն.
Ինչպես դուք, ա՛ն ալ սիրտ մ'ունի ըզգայուն:
Հակած ճակատն ու նայվածքները աղուտ,
Ամեն քայլին՝ վարանումները վախկոտ,
Եվ արցունքներն, որոնք կախած շըրթներուն
Կը թափթըփին, կ'ըսեն ձեզի. – Գըթություն ևն:

Երբ ծիծաղե դուք նոր ծիծաղ կը թըռչիք՝
 – Ինչպես գարնան աչքը ծաղկե ի ծաղիկ –
 Խորշ մը քաշված՝ անիկա սև կը ծըծե,
 Այդ զըրկըվածը խայտանքե, քըրքիջե,
 Այդ վտիտ սիրտն, այդ թույլ ճաճանչը դեղնած՝
 Որ ամպե ամպ կը փաթթըվի տըխրամած.
 Կարծես հոգվույն՝ Աստված դամբան մ'է դըրեր:
 Կարծես բըբին մեջ քամած է սև գիշեր:
 Օ՛ն, այդ տըխուրն հյուսեցեք ձեր զըվարթին
 Ձեր շողերուն, պայծառության, ժըպիտին:
 Գարունը իր ըստվերներուն հետ, տըղա՛ք.
 Է ավելի՛ քաղցրազըվարթ, ներդաշնակ:
 Թերևս օր մ'այդ սըրտեն տըխուր, վըհասույզ,
 Մարգրիտ բըղխի, տըխմար աչքեն՝ արշալույս.
 Երբ ժամն հասնի սին փոսուռան լույս չի՞ տար.
 Ո՞վ գիտե վաղն, այսօրը ո՞վ պիտ' գիտնար:
 Դեռ տարածամ՝ թող որ չը չափե այդ տըղան,
 Ձեր աչքին մեջ մըռայլ հոգին Մարդկության,
 Այգուն առջի թույլ շողին պես՝ որ կանուխ՝
 Կը խեղդի մութ վըհի մ'մեջ խորամուխ,
 Եվ դեռ մատաղ՝ թող չը կարդա ձեր դեմքին՝
 Մարդկությունն իր ճիրաններո՞վ միասին:
 Սիրտ սըրտի տվեք և ձեռք ձեռքի, սիրելիք,
 Քանզի աշխարհ կոր է, չըլլա՛ թե սահիք:
 Գիտցե՛ք սիրել. մի՛ անարգեք, մի՛ ծեծեք.
 Աստվա՛ծ մը կա, ո՞վ եղբայրներ. – Ներեցե՛ք:
 Ներեցեք դուք և պիտ' ներվիք հավիտյան:
 Մեր եղբայրն է՝ դատաստանի մեր մատյանն.
 Ըզգույշ եղեք. օրենքը ո՞ր կոխկըռտող
 Նույն օրենքովը չի դատվիր: Թողե՛ք ոխ:
 Ներել գիտցեք և պիտի դուք ապրիք հար:
 Հավատարիմ մեր հայրին է՝ մեր եղբայր.
 Օր մը Աստված մեզ անոր մեջ պիտ' դիտե. –
 Մի՞թե ո՞ր աչքն, որ թունալից, պըղտոր է,
 Կ'անդրադառնա իբրև պայծառ արևակ,
 Ո՞ր արյունն – ձեռքն՝ իբրև շուշան ըսպիտակ:

ՄՈՒԽԻՐՆԵՐՈՒՆ ԱՌՋԵՎ

Հյուղն այրեցավ: Թըխաթույր ծո՛ւխը նյութին
 Կապույտ գենիթը սևցուց.
 Ան, դեպ երկինք, խեղճ մարդերու հույսերուն
 Ոչընչացումն էր գըծուծ՞

Հովն՝ որ առաջ կը հեծկըլտար ցըրտագին
 Գույքերուն մեջ դիմակաց,

Հիմակ անոնց թույլ մոխրին հետ կը խաղա՝
Հեզնող շրշուկ մը ձրգած...

Կը մորմոքի ընտանիքն իր ջանքերուն
Մին փոշիին հանդիման.
Կու լա՛. անգո՛ւթ այդ հըրդեհումն արցունքո՛վ
Պիտ ջանար մարել ան...

Մայրն ըստինքին վըրա սեղմած մերկ որդին՝
Ավերին մեջ կը շըրջի.
Մանկան համար ողջ շապիկ ման կորոնե՛
Եվ կամ կըտոր մը քուրջի:

Տարաբա՛խտ մայր, կաթին գունատ փըթթումին
Պատըսպարան չը մընաց.
Հանկարծ ոտքին կը զարնըվի սարսուռով՝
Օրոցքեն փայտ մը, խանձա՛ծ:

Ո՛հ, դաժա՛ն բոց, ատիկա բույն մէր սիրո՛
Որ քանդեցիր դայրույթով.
Հոն, տըժգունած գույզ մը շըրթունք վրայե վրա
Կը ծըծեին սեր, գորով:

Արդ, մոխրին տակ խեղճերուն կյա՛նքն է թաղված
Ա՛լ դամբան մէ հյուղն իրենց.
Բախտն, որուն աչքն արդեն կապած է Աստված.
Փոշի, կըմախք հոն ձըգեց:

Ըսե, ո՛վ Տեր, հիմա դեպ ո՞ւր պիտ՛ երթան
Այդ թըշվառնե՛րը լալկան.
Դու որ անոնց տընակն առիր, հույսն առիր,
Օ՛ն, ըսե, ո՛ւր պիտ՛ երթան...

Գեթ անձնըվեր գութ չը տըվիր մարդերուն՝
Որ անոնք հոն կըծկըվին,
Որ մարդկային սըրտերու մեջ՝ գեթ անոնք
Խորշ մը գըտնան ջերմագին:

Ո՞ւր պիտ՛ երթան: Էրիկն արդեն հիվանդոտ,
Միրտ մուրկե ողբ լոկ կէլլե.
Կինը, վատուժ, պինդ շըղթայված իր վըզեն
Նիհար, փոքրիկ թևերե:

Ո՞ւր պիտ՛ երթան. Գահավեժի մը վերև
Իր կյա՛նքը մին կախելու,
Թե, հուսահատ, մյուսն անպատիվ տան մը մեջ

Մարութ սերն իր ծախելու:

Ո՞ւր պիտ' երթան սև նոճի այդ ծաղիկներ
Ճակատագրեն հողմավար,
Ծուխեն, բոցեն այդ քրշվածները շրմոր,
Վերքի շիթերն այդ թրշվառ:

...Ե՞րբ, պիտի գա, ո՞վ Տեր, այն օրը վըսեմ.
Եղբայրությունն Մարդկության
Ե՞րբ իր շրթան պիտի ձրգե, սրբտե սիրտ՝
Մեծ համբույրովն՝ հաղթակա՛ն:

Ե՞րբ հըրկիզյա՛լը չըքավոր, հուսաթափ,
Մոխրին վըրա ինչքերուն,
Ցուրտ, վիթխարի Լըքումին տեղ պիտ' գըտնա
Տիեզերական Օգնություն՝ ւն:

ՎՇՏԻՆ

Ինձմե հեռո՛ւ, ահավոր է տեսնալ քեզ.
Գարնան ծաղիկն ուղիսին կըրնա՞ դեմ դընել.
Ո՞հ, քեզի հետ ի՞նչպես կըրնամ չափվիլ ես.
Դու արհեստիդ մեջ վարպետ ես և ընդել:
Դեռ նոր դըրի՛ մեծ հովտին մեջ իմ քայլեր՝
Ուրկե՛ երկա յն՝ ճամբան կ'երթա նեղնալով.
Ծայրն է շիրիմն՝ գոր հասակս այս չի տեսներ
Կամ կը տեսնե միայն սուսկմա՛ն մը դողով...
Քայլիս առջև՝ մի՛ վերցըներ այդ հովտե՛
Ծաղկի, շողի և ցողերու պատմուճանն.
Թո՛ղ որ երկնի հորդ ալիքներն հըրեղեն
Հոն՝ կապուտակ իրենց ժըպտով հաշտ իջնան:
Ինձի համար խորդենին մի՛ներ եղիճ,
Աղավնին՝ անգղ, ու ջինջ վըտակը՝ հեղե՛ղ.
Վարդին ծոցեն հանե պիծակը խայթիչ,
Մարգն՝ օձին մի՛ կապեր դիմակ մը շըքեղ:
Բ

Նորեն վըրա՛ս հարձակեցար բըրտորեն,
Դո՛ւ, ողջերու գերդ բորենի դժոխային.
Ժանիքիդ մեջ խըրած՝ արյուն կը կաթեն
Ծըվեններն որս եղած սըրտի մը նախկին:
Կը տեսնեմ. չե՛ս կըրնար ծածկել աչքերես
Ձեռքիդ մեջի սըրվակն ողբի, արցունքի.
Սըրվակն հյութի մ' (մահացուցիչ՝ թույնի՛ պես)
Որ մարմինն հար կը վարակե հյուճանքի:
Մորթիդ ամբողջ ծակտիներեն կ'արտադրի
Հուսհատություն և թախծություն հոգեկան.

Արտաշընչմանըդ մեջ Լըքումը կ'ապրի՝
Որ միշտ ճամբա կը բանա քու հարձակման:
Վայրի մազիդ ալիքին մեջ ծրփանուտ՝
Ես կը տեսնեմ պըսակ մ'հագած արյան գույն.
Ձոր ինքնակալ Մահը ձոնեց քու գըլխուդ՝
Երբ տվիր անոր թանկ ավարի մ'հըղփությունն:
Գ

Քեզ հըղացան փոթորիկնե՞րն ավրող հար,
Թե՞ քեզ ծընան նավը փըշրող կոհակնե.
Սև հրաբուխի մը ոսկորե՞ն դուրս ելար՝
Ուր մեզի դեմ Սատանան քեզ կը զիներ:
Երբոր Աստված իջավ կավին փըսփըսաց,
Որ ծընավ ա յապես հողն՝ ըզմարդ, մարդն՝ ըզկին,
Կը թագչեիր պըտուղի՞ն մեջ արգիլված՝
Որ փոքրիկ բան օրենք դրավ մե՞ծ աշխարհին.
Բայց ա՛յս գիտեմ՝ թե ճանչցուցին քեզ ինձի՝
Երբ էակներ փափագեցան որ ապրիմ.
Երբ օրոցքին մեջ մորըս շիթը լացի՝
Եկավ ըլլալ իմ շիթերուս մըտերիմ:
Երբ աչքս, արբշիռ, դիպավ աչքի մը բոցե,
Եվ փոքրիկ սի՛րտըս սիրո մեծ վիհն իջավ.
Ձերդ ծիտ մ'որ դեպ արփվույն հասնիլ կը փորձե,
Եվ կամ արփին գըրկել՝ Անհունը անբավ:
Երբ բաշխեցինք հիշատակներ գատվելու,
Եվ մեռավ մամս, ու եղբայրներս ետևեն.
Զի՞ փաստաբան՝ ծերը մանուկը կ'առնու՝
Սուրբ Դատողին դեմն ելլալու նեղ ատեն:
Դ

Ինձի կու գաս ո՞ւր տեղվանքներ այցելած.
Դալուկ դեմքե՞ն սև դագաղի՛ մը հակող,
Հառաչանքե՞ն որբիկներու, աղքատաց՝
Որոնց համար կը պարզե ձյունը սև՝ քող:
Հուր ողբերգնե՞րն Ուսկյուտարի Սոխակին,
Թե՞ Հուսահատ Ռեգանաթցվույն անհուն ցա՛վն
Ըզքեզ սընույց, որոնց սիրած գեղն, ինքնին,
Իր օրոցքեն գերեզմանին նայեցավ:
Կուրծքե՞ն կու գաս Ավարայրի Պըլպուլին՝
Թ'Իսրայելի Երանելվույն սըրտին լայն,
Որուն վըրա փորձություննե՛րը Դիվին
Եվ Աստուծո համբերությունն կըռվեցան:
Ե

Արդ, այդ գոհե՛րըդ կը նընջեն ընդերկար.
Վառ հիշատա՛կ մ'անոնք մեզի զըգեցին՝
Որ իրենց տեղ պաշտըվելով կ'ապրի հար,
Քանզի կյանք կա՝ որ մահ չունի բընավին:

Հիմա չը կա՛ն անոնք, շատե՛ր ալ նան՝
 Որոնց գրլուխն կեղեքումներդ թափեցիր.
 Ինձի՛ կու գաս. արդեն լանջքիս ճիշտ ներքև՝
 Կը զգամ խորնալը թաթերուդ մահացիր:
 Խընդության հետ՝ կյանքըս ձեր մեջ կը բաժնեք,
 Ու է՛ն մեծ մասն, ազա՛հ, դու, դու կը խըլես.
 Ո՛հ, գոնե մի՛ լըմընցըներ այդ ամենք՝
 Որ ուրիշ ալ չըլլա թ՛ընես բաժին քեզ:
 Արդեն կը զգամ. կը խառնակին իմ աչքին՝
 Ներդաշնակված կապն իրերուն մութ, և ջինջ
 Սըրտիս վըրա փըլատակներ կը սըփոին.
 Կարծես Բնությունն ինձ կը դառնա ցուրտ Ոչինչ:
 Իսկ դու ինձ չե՛ս ուզեր լըսել. ի՛նչ, այնքա՛ն
 Արշալույսին պիտ՛ չը տամ փոխը ժըպտին.
 Դեռաբուսիկ այս հասակիս խընդության
 Օրենքին դեմ պիտ՛ մեղանչե՛մ տակավին:
 Է՛ր կը խըլես ապագայիս կայծը վառ՝
 Եվ բոցերու ճարա՛կ կ՛ընես իմ ներկան:
 Անտառին մեջ չը մընաց ե՛րգ ինձ համար.
 Ամեն բան դեպ գերեզմաննե՛րը փախան:
 Զ

Պիտի վայրկյա՛ն մը չապրեի քեզի հետ
 Հեզ սիրտըս այդ թաթերեդ դուրս կորզելով.
 Եվ իմ ձեռքով պիտ՛ ընեի կյանքս անհետ,
 Թեպետև ես ըստեղծվեցի իմ ձեռքով:
 Պիտ՛ չապրե՛ի, եթե ինձի չըսեին
 Անոնք՝ որոնք ունին տարվո խորշումներ,
 Ու շա՛տ գիտեն, և ձըզելով ետևնին
 Արշալույսներ՝ կ՛երթան վըհի մ՛ալեհեր.
 –«Ճակտին վըրա, ակոսներուն մեջ վըշտի՛՝
 Կը ցանվի սերմն իտեալին սեփական.
 Օր մ՛այն հոգին՝ որ ցավերով կը տվայտի,
 Պիտ՛ դառնա վարդը Անհունին խընդության»:

ՎԻԺԱԾԸ

Առանց շունչի վըտիտ սիրտ,
 Առանց ժըպտի, սև ծաղիկ,
 Արյուններու մեջ խեղդված,
 Կը ծընանի: Չի լար. է
 Լուռ և տըձև. ուղիսեն ափ
 Նետված քուրջի մ՛է նըման
 Թըշվա՛ռ էակ, երբեք իր
 Աչքին մեջ՝ բիբ, կուրծքին՝ իղձ
 Չը թըրթըռաց. կույր հույսիս
 Նըման եղավ, գոր հոգիս

Իր վիհեն դուրս կը նետե՝
Դիակ մ'ըլլալուն համար սուկ:
Ծընա՛ծ մեռել. ո՛հ, իգուր

Մայրդ համբույրով ըսպասեց
Շըրթունքներուդ վարդերուն.
Անոնք թոռմած դուրս եկան.
Իգուր հյուսեց երգերով
Շապիկը սուրբ կընունքիդ.
Ան քու պատանքըդ եղավ:
Ինչո՞ւ, ըսե (թող քեզի
Մոր մը ծարավը սիրո
Լեզու հանե), մեր կյանքին
Այսպես ինչո՞ւ փութացիր.
Դեռ սաղմըդ լավ չանցուցած
Իրեն սուրբ քաղց իննամայա
Ծընող մարմնեն, արյունեն,
Ինչո՞ւ համար, կոկո՞ն հունձք,
Դեպ օրոցքի մ'ըշտապեն
Գերեզմանի մեջ ինկար:
Քեզ ո՞ր ծաղիկը դյութեց
Դուրսը, հոս տեղ. և կամ ո՞ր
Թիթեռնիկին ետևե
Դու վազվըզել ուզեցիր...

Ո՛վ տառապանք. ձեզ համար
(Ըստեպ) ձեզի համար է
Վիժումն, աղքա՛տ Հըղիներ,
Քաղցածության, տաժանքի
Մայլին լըծվա՛ծ Հըղիներ:
Անոթության ժանիքեն
Ցորչափ ձեր կուրծքը մաշի,
Պիտ՛ չունենաք դուք արյուն
Արյան համար, միս՝ մըսի.
Ցորչափ ըլլաք հազար ծանր
Աշխատության սահմանված՝
Մեռի բընագղն, առնական
Համբույրը ձեզ չարիք է.
Ձեր արգանդները մեյ մեկ
Գերեզմաններ պիտ՛ ըլլան:
Մինչդեռ կաթով մը վատուժ
Ամսե ամիս, շիթ առ շիթ,
Կը լեցվին ձեր ըստինքներ.
Մինչ անգիտակ կը ժըպտիք,
Երագի մեջ, մանկական
Սև աչքերու, շըրթներու

(Խոսուն վարդեր) և անոնց
Սոխակն հաղթող կակազին,
Խորը, ձեր մեջ, – լո առ ոճիր –
Սև Մահն էակ մը, անձայն,
Ձեր աղիքով կը խեղդե:

ՄՈՒՐԱՑԻԿԸ

Միայնա է, անդամալուծ՝ մեջքեն վար.
Դեղնություն մ'իր նիհար մարմինն է ծածկած.
Իր խորթ կյանքին աշնանը մեջ կ'ապրի հար,
Մինդեռ անցքին գարուն մըն ալ չէ ձրգած:
Մեզերո՛ւ շող, հիվանդ ծաղի՛կ եղտյուրի,
Մարդկության մեջ՝ ըստվե՛ր ձրգած մեր ճակտին:
Միայնակ է. վըրայեն այս աշխարհի
Բան մը չառավ, պիտի չը տա բան մ'ալ սին:
Երգեռնիկ մ'է միայն՝ իր մեծ հարստությունն՝
Ջոր, պատի մ'տակ, մորն օրհասին նեղ ատեն՝
Անոր ձեռքեն քաշեց հանեց շըլմորուն,
Ահաբեկած՝ անտեր կյանքին ապրուստեն:
Ո՞վ պիտի այդ գործիքն անոր զըլանար,
Պակսած աչքին տեղ այդ երկրորդ աչքն հընչող՝
Ջոր տըվավ Տերն, որպեսզի ան թափե վար՝
Գոց բըբին տակ ժողվված արցունքը ճընշող:
Այդ երգեռնիկը շատ հին է. գիտե ան
Հիվանդ, տըխեղծ սերունդներու պատմությունն.
Հին արցունքներ չորցած են վրան, որք եղան
Պահարաններն իր նըվագած վըշտերուն:
Բաբախուն կուրծ միտն կ'ընե միշտ ելևեջ
Ուրախ շեշտ մ'իսկ եկած չէ իր հեքին քով.
Բուռ մը արցունք նետած է Տերն անոր մեջ՝
Մակընթացման, տեղատվության ծըփանքով:
Փողոցին մեջ երգը կ'երթա դարձդարձիկ,
Ճամբուն ծայրեն մինչև տունի մը ետև,
Չը մնալով շատ հեղ անկե կըտոր մ'իսկ՝
Գիրգ լանջերու մեկ ժանյակի մ'ալ ներքև:
Այդ երգեռնիկն իր մ'է որ մեզ կը խոսի՝
Բյուր ցավի բյուր լեզու ժողված իր բերան.
Կը բանա ա՛յն կյանքերուն քողը մեզի՝
Որոնք մեր կույր ոտքերուն տակ կը վըխտան:
Ահա՛ .
Վիհ մութ, գազրատեսիլ, ահռելի,
Ժըխոր զեռուն, իրարու վրա, կարեվեր,
Ձերդ խըռնըված պոլիպոտներ քըստմնելի,
Տըժգույն դեմքեր, տըժգույն աչքեր, անդամներ:

Հառաչանքներ՝ հանդիպած պինդ սրբտերու՝
 Ինչպես ծովուն թույլ ծրփանքները ժայռին.
 Ելլող սրունքներ՝ սառին վրա մո՛տ հալելու,
 Ինկող գանկեր՝ խորն ըստվերին ու գայռին:
 Տապըլտըկող ուսեր՝ որոնք կը հըրեն
 Մերին գոց դուռն՝ որուն բըռնած ենք նիզեր.
 Մն՝ փըրփուրներ՝ նետված թյուրակն ալիքեն՝
 Որք կը ցընդին մեր ոտքին տակ. չե՛նք տեսներ.
 Դողդոջ քայլեր՝ մերին քայլին ետևեն՝
 Որուն ճամբան իրենց ճամբա է միայն.
 Տըմույն այտեր՝ չը բոսորած արևեն.
 Իրաններ ցուրտ՝ սարսուռներու գերեզման:
 Աչքե՛ր որ լոկ (Գըթածը մերթ մոռնալով),
 Իրկունն, ձեռքին մեր կը սպասեն դողդղագին՝
 Թե պիտ՝ արդյոք արձանագրե՞նք գըթալով՝
 «Վաղը» իրենց տետրակին մեջ ապրուստին:
 Օրոցքներ սո՛սկ շիրմի համար խավարչտին.
 Առանց բոցի և համբույրի մը՝ սերեր,
 Որոնք իրենց դեռ սաղմին մեջ կը մեռնին՝
 Ինչպես չելած դեռ կոկոնեն՝ ծաղիկներ:
 Անդամներ գոս, պակաս դըրված, և կամ ծուռ,
 Ցամքած սրբտեր՝ որոնք վախեն ժանտ Մահվան՝
 Նույնիսկ տըղմի մեջ կը պահեն թաքթուր՝
 Մեկտեղ իրենց ներկային՝ կույր ապագան:
 Կուրծքեր՝ վերքով և արյունով պատարուն,
 Հազիվ ծընած՝ փոշի դարձած երազներ,
 Եվ արցունքներ հեքով մ՛հնկած քուրջերու.
 Նըվաղումներ, կոծեր, դողեր, օրհասնե՛ր.
 Ահ, այս ամենն ոտքերեն մեր վեր կ՛ելլա
 Եվ, վարանոտ ու դողդոջուն, ճիշտ նըման
 Քայլը դընողի մը անհաստատ ճյուղի վրա,
 Կը ծեծե սնարը մեր նընջող Գըթության:

ՄԵՌԱԾԻՆ ՀԱՄԲՈՒՅՐ ՄԸ

Համբուրեցի, Մըտերմությամբ սիրահեղց,
 Միրտս անտեսեց նախ սարսուռն այդ դիակին:
 Կը գատվեր ան. հոգիս մեծ փերթ մը ուզեց
 Իրմե հանձնել մահվան այդ սև թըռչանքին:
 Այդ համբույրն արդ կը ճամբորդե ու կ՛ացնի
 Գերեզմանին մեջեն, մեջեն սևության.
 Մեռած ճակտի մը վրա սիրտ մ՛է կենդանի..
 Ծաղիկ՝ նետված ցուրտ մարմարին շիրմական:
 Եվ կը դողա՝ փաթթված այդ ճակտին վրա:
 Զինք մահվան այդ ճամբորդին՝ Մերն է հանձներ.

Եվ Մերն է խի՛ ստ, խիստ գորավոր, ան կըրնա
Կայծը՝ մոխրին, ողջը՝ դիակին միացնել:
Ո՛վ համբույր, դու արցունք մ'էիր շրթթունքի.
Քեզ հըղացա խոցված սըրտի արյունով,
Եվ դամբանի ջահին մրուրովը սուգի.
Քեզ սընույց կոծն ուռիներուն հողմախռով:
Երբ սիրելի Մեռնողն հեքոտ իր հոգվույն
Թռիչները, լուռ, կը տարածեր դեպ երկին,
Մինչ իմիններս անոր դեմքին դեղնագույն
Կ'ամփոփվեին՝ ծընա՛ր դու այն վայրկյանին...
Ո՛վ սերերուս ցայտումն անկեղծ և անանց,
Գիտես այլևս ապրիլ նույնպես կյանքե՛վերջ...
Մըտերմական անունի մ'հետ սիրտ կապված՝
Կը հոսեցնես քաղցր հիշատակ մ'հոգվույս մեջ:
Ուրիշ հազար համբույրներու մեջէ հին՝
Քու վըրադ սոսկ կը մըտածեմ ընդերկար.
Մյուսներն հիմա սըրտերու մեջ կը հանգչին,
Մինչ, անձնանվեր, դու լոկ դագաղ դըրվեցար:

ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ՄԵՄԻՆ

Գերեզման մ'էր, լերան ոտքին, գետին մոտ.
Թափառական քայլերըս զայն գըտան հոտ,
Երբ կ'երթայի երագուն,
Իրիկունն, հագած արևին հուսկ շողը լալ
Միրտըս հանձնած ծաղիկներուն և միտքս ալ,
Փըթթելու մոտ աստղերուն:
Գերեզման մ'էր: Խաչ մը անտաշ, քար մ'անխոս.
Քարն անանուն, և խաչըն ալ՝ անքրիստոս,
Հոն կը հըսկեն մենակյաց.
Մին գետեղված է ձեռքերով մըտերիմ,
Եվ մյուսն, երկու մասրի ճյուղեր, սև մազի մ'
Գիսակներովն հոն կապված:
Այս է բոլորն. ու ասոր հետ բընությունն
Որ կ'օրորե այդ քունն իբրև մայր մ'անքուն:
Տերներու սոսափներ,
Գետին ողբանքն ու խոշոր բիբը լուսնին
Մոռացությունն հոն կը սպաննեն. հոն երկինն
Իր նայվածքներն է թափեր:
Ի՛նչ լավ է հոտ. կարծես թե դա՛շտն է՝ հըսկա
Ուխտավոր մ'այդ գերեզմանին, զի տեսա
Անմոռուկներ ինքնաբույս՝
Ջոր կապած է բնական ոլոռ մը՝ խաչին,
Եվ համբուրող շրթթունքը բոց կակաչին
Քարին ծըռած սիրահույզ:

Խոնարհեցա և հոգիս լի աղմուկով
 Դատարկեցի մեռածին լուռ սնարին քով.
 Գյուղի գիշեր մը երբե՛ք
 Ա՛յնքան լավ չի ծրծեր դողանջը զանգին՝
 Որքան ծրծեց մահվան այս փոսը լռին
 Հոգվույս ճիչերն հուսաբեկ:
 Խոնարհեցա և կածես ինձ հետ բոլոր
 Բնությունը հոն խոնարհեցավ, ահավոր
 Ըստվերին մեջ ծընրադիր.
 Եվ միացավ իրերուն սիրտը սրբոխս՝
 Խիզախորեն ընկրդմելու համար զիս
 Խորհուրդին մեջ սևածիր:
 Վար, վար: Լըռե՛, ճըպուռ սյուքե՛ր, լըռեցե՛ք.
 Դագաղին խորը չի հասնիր ձայնն երբեք.
 Գերեզմանին քարին տակ
 Մայր – լըռությունն է բանտարկված: Վար, վար, վար.
 Կը կարկի գետն, աստղը կ’մարի, հով չի գար.
 Վի հ, մութին պես անհատակ:
 Կը խափանեն մըտքիս թևերն. ո՞ւր է, ո՞ւր
 Վախճանողին գացած ճամբան. ո՞հ, ի գուր
 Կը փրնտըռեմ հոն, իմ շուրջ,
 Անոր անունն ի՞նչ է, կամ ի՞նչ է անունն
 Անդըրշիրմի Եղածին, ո՞ւր է Անհունն,
 Ո՞ւր է Խորհուրդն. Աղջամո՛ւ աղջ:
 Ո՞հ, դու ո՞վ ես, ո՞վ անձանոթ վախճանած:
 Ի՞նչ սըզավոր քեզ կը բերե ուխտ կամ լաց
 Ո՞վ, ո՞վ ես դու՝ որ ըրիր
 Շիրիմը դուռ, քեզ դրոնապան գաղտնիքին.
 Ո՞ւր կյանք առիր, և կամ ո՞ր շողն, ո՞ր երկինն
 Այտըդ ու շըրթունքդ երփնեց հիր:
 Ռազմի՞ կ’մ’եղար՝ որ սիրուհվույն ծունկին վրա,
 Ուր ժանտ Մահն իսկ խենթ սիրահար կը դառնա՝
 Կը սպաննըվի անդարման.
 Թե դու հյուծախտ տղա մ’էիր, հեզ գեղջուկ,
 Որ հըրդեհված իրենց գյուղեն՝ խուսափուկ՝
 Կը մեռնի հոս, կես ճամբան:
 Վըհուկ ծե՛ր մ’ես՝ թաղված երգով մը թովչոտ
 Եվ ողբացված՝ ժամերու մեջ անձանոթ
 Իրեն վըհուկ կընոջմեն:
 Կյանքի բաժակդ՝ որ ա՛լ դատարկ կը հըսե
 Գըլխուդ վերև, քանի՞ շիրթով լեցվեր է
 Տարիքն համրող արցունքն:
 Խոսե, ո՞վ ես. սակայն ո՞վ որ ալ ըլլաս,
 Թող ես շիրիմըդ համբուրեմ, քանզի այս
 Մեր կյանք – գոհին բագինն է.
 Քանզի քեզ ա՛լ չեն աղարտեր մեր օրեր՝

Ուր ապրողն, ո՛հ, մեռնողին չափ չի գիտեր,
 Ուր մարդուս չափ վիշտն հին է,
 Ուր մեր գրքքին երկրորդ էջերն են ճերմա՛կ:
 Եվ գիտության ծառին արմատն հողին տակ
 Դեռ միշտ թաղվա՛ծ է անհայտ: –
 Դու բարի ես՝ ինչպես սուրբ գոհն Աբելին,
 Ջի մահվան սև համբույրին տակ կը փոխվին
 Ամեն շանթեր՝ ճառագա յթ:
 Եվ դու սուրբ ես՝ ժրպիտին պես բընության.
 Արշալույսն իր ցողը ճերմակ քարիդ վրան
 Ամեն առտու կը թափե,
 Ջերդ արցունքներն՝ որոնք լըռիկ կը կաթին
 Գըրած սիրո նամակին վրա նոր հարսին՝
 Որուն փեսան զինվոր է:
 Դու գիտո՛ւն ես. մըտածումն ա՛լ գանկիդ տակ
 Ճողոպրած է ուղեղեն փուտ ու ցամաք.
 Երակներուդ մեջ հիմա
 Արյունի տեղ ճառագայթներ կը սահին,
 Եվ վերնագիրն հին գիտությանըդ գրքքին
 Արդ փոխեց ձեռք մը հըսկա:
 Քու ճակատդ էն կը շոյե, մերը խավար.
 Մեր գիշերն է հոտ միջօրե քեզ համար,
 Անշըրջելի՛ հակոտնյա:
 Մենք օրոցքին մեջ ըստինքեն մայրենի
 Միրտ կը լեցնենք, իսկ դու հոգի դ՛հողանի
 Գերեզմանին մեջ անգա:
 Եվ կ՛ըլլա հոտ մեր մայրն՝ Աստված, կաթը՝ լույս,
 Թողլըքելով Տարակույսն ա՛լ շիրմեղ դուրս
 Աշխարհիս հետ միասին:
 Ո՛վ սուրբ մեռնող, ո՛հ, մինչև ե՛րբ շըլմորած
 Պիտ՝ ճակըռթենք ահավոր ամպը՝ առանց
 Ջայն շերտելու բընավին:
 Խորհուրդին դեմ մենք մինչև ե՛րբ, ծընրադիր,
 Առկայծ հույսով պիտի գոչենք. «Լ.ո՛ւյս, իջի՛ր...
 Պատռե, պատռե, ո՛վ մըթություն, լըռություն ին.
 Կարծիք, պատռե, պատռե ո՛վ մեզ, անվերջ քուն,
 Անդունդներն մեզի նայող, ո՛վ մեծ աչք՝
 Որ չունիս քու բիբըդ, ո՛վ բիբ, դու նայվածք:
 Մենք հերածակ քեզի կ՛նայինք. ծառերուն,
 Աստղներուն, ալիքներուն, ժայռերուն
 Մեջե քեզի, քեզի կ՛նայինք. մերկացիր:
 Դո՛ւ – որուն քողն է ապագան – մերկացի՛ր:
 Ո՛վ ներքին կողմը դամբանի քարերուն,
 Ո՛վ միգամած, ահեղ գիսաստըղ՝ որուն
 Գըլուխն է պահվա՛ծ ամպի մը տակ հավիտյան.
 Ուրեմըն մենք մեր ուղեղներն ընդունա՞յն

Պիտի ճրգմենք ոտքերուդ վրա պըղընձյա,
 Եվ ընդունա՞յն պիտի նետենք անխընս
 Մռայլ գիշերվան մեջ մեր սըրտերն՝ որ կ'երթան
 Քեզի համար մըրըիկներուն բըռնության
 Դեմ գալարիլ, որ՝ մոլորած խավարին
 Մեջ՝ ժայռերուն դեմ ճըչալով կը բախին.
 Եվ բուերեն քըշված, քըշված լըքումեն,
 Խորը, ձորին մեջ կ'ընկընդմին, կ'որոնե՞ն,
 Անկե մեզի դուրս բերելով, ա՛լ հոգնած,
 Հեզ կայծոռիկ մ'ավա դ, արև համարված:
 Ո՛հ, մինչև ե՞րբ ըսփինքսային ճակատով,
 Դու, ո՛վ Խորհուրդ, պիտի ծաղրես անվըրդով
 Առջևդ մեռած մեր խոհն, արծի՛վ – ողջակեզ.
 Ըսե, խոսե, պիտի մինչև ե՞րբ լըռես»:

Մինչև ե՞րբ ան պիտի լըռե: Ո՛վ շիրիմ,
 Ճակատս ահա քարիդ դըրած կ'ընկըղմիմ
 Աղոթքիս մեջ: Կը հուսամ:

Գանկիս ներքև կրակի տըվի ամեն բան.
 Հոն հըրդեհ կա. մըտածումներըս կու գան
 Քեզի կու գան հրավարսամ:

Օ՛ն, սըրբագրե, կամ ավելցուր, կամ ջընջե:
 Ճերմակ քարեդ ճակտիս անցածը ի՞նչ է.
 – Խոր լըռությո՛ւն, այլ ոչ բառ:

Լավ. կը հանե՛մ շուրջիդ բույսերն արմատեն.
 Մըրտիդ, գանկիդ մեջ անոնք ի՞նչ կը ծըծեն.
 – Մարմինն, այլ ոչ գաղափար:

Լավ. վըրայե՛դ կը թավալեմ քարն անդին,
 Ըսպիտակ էջ, որուն մյուս կողմն է գըրված
 Անպատճառ բան մը Մահեն

Անոր ներքև գաղտնիք մ'անշուշտ կը շնչե.
 Մի՞րտ թե հոգի՞. օ՛ն, ըսե ինձ, թե ի՞նչ է.
 – Երկու կարիճ, այլ ոչ էն:

Արդ, այս հուժկո՛ւ թներովս ես կը բըրեմ
 Հողն, և աչքերս այդ գերեզմանըդ նըսեմ
 Ուղղահայաց կը չափեն:

Ո՛վ խորություն. մութին ծոցեն ի՞նչ լուսին
 Պիտի պոռթկա, ի՞նչ հուր – բառեր պիտ՝ ժայթքին
 Հավերժության շըրթունքեն:

– Լըռությո՛ւն. տե՛ս.

Հողերուն հետ դուրս կու գան
 Փուտ ոսկրոտիքը, մընացորդ մարդկության,
 Որով վանդակ մ'հորինեց ձեռքը կյանքին
 Հոգի կոչվածը մեզ անձանոթ փյունիկին:

Ահա կողերը մերկացած գերդ ճանկեր,
 Ահա կըրծոսկրը՝ որուն դեմ կը բախեր
 Իդձն իր ճակատն երակային զարկերով՝

Իբրև հեզիկ այսակին մեջ ուռչող հով.
 Ահա թևերն և ուլն անջատ ու լրքված՝
 Որոնք երբեմն, ո՞վ գիտե, սիգապանձ
 Կ'հոխորտային. «Կը ծռենք, բընա՛վ չենք ծըռիր»...
 Լիսեռին հետ ահա սրունքներն անհարիր՝
 Որք կարծեցին, թե ժայռն իրենց ներքև հար
 Պիտի թընդա՝ քանի որ դեռ, բոցավառ,
 Արևն արյունը կը շարժեր. և ահա
 Չորցած կըզակն, ահա ծընոտն՝ որոնց վրա
 Կը ծաղրեին այտերն վարդն՝ երբոր ան
 Կը դառնար հեզ իբր հյուծախտ սիրտ մը, աջնան.
 Եվ ահա գանկն, ոսկրեղեն թաս՝ ուրկե հար
 Մարդ կը խըմեր մտածման գինին կենսարար.
 Արդ ուղեղի տեղ հողով է լեցված ան՝
 Որուն վըրա չար խորհուրդի մը նըման՝
 Ոլոր պատկած օձ մը գլուխն յուր կը տընկե,
 Եվ սարսափն հոն սարսափողե միշտ գուրկ է:
 Ա՛լ ոչ կյանք կա, ոչ հույս, ոչ սեր և ոչ քեն,
 Իր որդնակներ, գոս ջըղերուն վըրայեն
 Ըզգացումն ա՛լ փախավ, նըման գեփյուռին
 Որ կը սահի տերևներեն, ողբագին:
 Փռշի , աճյո՛ւն, խառնորդ մըռայլ, վիթխարի,
 Փըտրներու, մոխիրներու, որդերու
 Ո՛վ կույր անդունդ, ալիքին տակ վարդերու:
 ...Կ'իջնան, կ'իջնան: Ժամանակին ափը, հոս,
 Գերեզմանին ափին ծըռած է. քառ՝ ս.
 Ահա Ադամն, Ներոնն ահա, և Վարդան,
 Սոկրատն է այս, Բարաբբան է, ես, դու, ան.
 Այս ծակծրկված կողերն իմին կողերս են.
 Իմ աչքերս՝ իմ ոսկրոտիքս հոս կը դիտեն:
 Մարդ կ'իյնա. ո՞ւր. ահեղ գոգն օվկիանին՝
 Եվ ալիքներն անոր վըրա կ'համբուրվին,
 Հոն փըռելով ճերմակ փըրփուր մը անվերջ.
 Եվ կ'իյնա. ո՞ւր. երկրիս խորունկ կլափին մեջ՝
 Ու վրան զիրար կա գան գըրկել սև հողեր՝
 Հոն թողելով ըսպիտակ քար մը, հրավեր
 Ծընրադրության: Ժամանակն է խարբալ մ'հին,
 Ժողովուրդներն ավագ՝ որ միշտ կը մաղվին:
 Որոտընդոստ ձայն մ'որուն ամպն է շրթունք՝
 Կը մըռընչե. «Անդունդի՛ն. գո՛ւր է արցունք»:
 Եվ թըխաշուրթ խորխորատին մեջ մըթին՝
 Կու գան դիակներ իրարու վրա կը դիզվին.
 Պապն հոր ներքև, ու գավակին ներքև հայր.
 Եվ հոն համբույրն ա՛լ համբույրեն չի տաքնար.
 Եվ մոր ըստինքն որդվոյն սառած բերնին վրա
 Կը քայքայվի. կյանքն իր ակե՛ն կը չորնա:

Այրուձին մեծ հաղթանակեն իր գինով՝
 Երբ կը կըտրեր մեծ ձոր մը մեկ ոստումով
 Մահվան փոսն այս՝ լայն կը գըտնէ իր չափեն:
 Ո՛վ արհավիրք. երբ պատերազմն իր թափեն
 Ա՛լ կը դադրի, իր գայրույթեն փառքն անշեջ,
 Եվ թագավորն իր կընճիթն ա՛լ վերքի մեջ
 Մըխըրճելեն, կը բերե դաշտը վարդգույն՝
 Որուն սերմն է՝ դիակ, տարափը՝ արյուն,
 Կը բերե հո՛ւ, հոս պարպել իր մարմիններ,
 Հոս լըճացնել իր խոլահոս արյուններ.
 Մահաբեմերն (ուր միշտ պատրաստ Մատանին
 Մորթին վըրա դանակներն հար կը սըրվին)
 Կը պարպին հո՛ւ, հոս քաղաքին ճամբաներ.
 Հո՛ւ հիվանդին անկողիններն մահաստվեր՝
 Որոնց մեջ հեզ հոգին, ջերմի ցընորքեն
 Կը համարի թե վարն դագաղ կը շինեն.
 Հոս կը նետե իր գահն արքայն մոլեգին,
 Հո՛ւ կը նետե լեռնամեջն իր բորենին,
 Հո՛ւ Բյուզանդիոնն ու Հռովմն ամեն սոս կեսար.
 Հո՛ւ հաղթ արծիվն իր փետուրներ շանթահար:
 Այս է աշխարհս, ո՛վ Ջորեղներ: Դար դարե
 Կը թավալի մըղված ուրիշ դարերե.
 Եվ հազիվ դող մ՛՛ Հավերժությունը կը զգա՝
 Իբրև նետվեր քար մ՛՛ օվկիանի մը վըրա.
 Կը պարպըվին վարն անթիվ սև դագաղներ,
 Մըժեղներու հըսկա երամ, տարուբեր,
 Անվերադարձ կը կորսըվին ձորին մեջ.
 Ահա սիրտ մ՛՛ ա՛լ չի բաբախեր, անկե վերջ
 Ուրիշ մըն ալ, ուրիշ մըն ալ, գոհ, գոհ, գո՛հ,
 Ժամը ժամին, բոպե բոպե: Եթե ո՛հ,
 Մեկտեղ բերվին սգավորներուն արցունքներ,
 Ո՛վ Երկինք, քու ցասման շանթերդ մահաբեր
 Դեռ չե՞ն մարեր: Եվ կը վիժին մարդիկներ
 Գիշերվան մեջ՝ երբ հազիվ հազ է սառեր
 Իրենց քաղցրիկ օրոցքներուն տաքությունն
 Երբոր, ավա դ, դեռ չէ սևցած՝ մատերնուն
 Ամուսնական սուրբ մատանին. և կ՛իյնան
 Մեռա՛ծ, երբ դեռ մեղրալուսինն ըղձական
 Իրեն մահի կ՛վիճակին մեջ կը շողա,
 Կամ երբ, տարեց, դեռ գիտության պըղընձյա
 Բերանն հազիվհազ բանալու տագնապին
 Մեջ՝ կը դողան իրենց մատեր... կը սառի՛ն:
 Ցավի, ողբի, ճիչերու մեջ, դեպի վար
 Կը սայթաքին. հե՛զ թըռչուններ նետահար,
 Որ չեք գիտեր հարվածն ուրկե՛՛ եկավ ձեզ,
 Կը սարսըռաք, կը թավալիք աղեկեզ,

Եվ թըռիչնիդ ամփոփելով, շըվարած,
 Գըլուխնիդ կըծկած թներուդ տակ, լուռ, սառած,
 Ձեր երգերուն արձագանգին մեջ, ավա դ,
 Կ'անշընչանաք: Մութը կ'իջնե միապաղաղ,
 Արտասովաթոր պատանքին մեջ, հողին տակ,
 Արշալույսի մ'ըսպասելով՝ կը քնանա ք...
 Կու գա Քրիստոս, կը մոտենա ձեր շիրմին,
 Եվ վերքին մեջ մըխելով մատն երկնային,
 Ձերին երմակ քարին վըրա, անայլայլ,
 Արյուն գըրով մ'ան կը գըրե. – ՀԱՆԴԵՐՁՅԱԼ:
 Ամպի մը տակ լուսինն հանկարծ կը մարի,
 Կը լըռե հովն, ամեն աստղեր մի առ մի
 Ասուպ կըլլան, կ'ըլլան վարդերն ալ՝ վերքեր:
 Ո՛վ անանուն շիրիմ, դու որ անտարբեր,
 Ու երազկոտ կը նայիս դե՛ պի երկին՝
 Մարդիկ այսօր, օ՛ հ, գիր առ գիր լիզեցին
 Այդ բառը քու քարիդ վրայե սըրբագան,
 Ահա ինչո՞ւ թե ձերմակ է մնացած ան:

ՀԻՎԱՆԴ Է

Ըստվերին մեջ, խանի մ'անկյունը լըքված
 Թըշվա ո պանդուխտ, հիվանդ է.
 Խոնավությունն անոր մարմինը շիթ շիթ
 Գերեզմանին կը նետե:
 Բըժիշկ չունի. եղած դըրամն ալ հատավ.
 Ցավը ծանր է. գըթություն ւն:
 Հոն չը կա սիրտ մ'որ բարությունը քամե
 Անոր ծարավ շըրթներուն:
 Եվ ինքն իրեն մըտերիմներ կը ստեղծե
 Ցընորքներուն մեջ ջերմին.
 Իր վիճակին կարեկցող մեկը չունի
 Բացի մամուկը որմին:
 Մըթընշաղին մեջ կը մարմրի, կը հյուծի
 Մըթընշաղի մը նըման.
 Լըռությունն հոն կարծես դագաղ մը կ'երկնե.
 Օրոցք՝ տունեն գերեզման:
 Երիտասարդ է տակավին, և փեսա.
 Պոլսեն մինչև Վան հեռու,
 Հոն՝ հաց կ'ուզեն հարսն ու ծընողք. զի՛նք կ'ուզեն.
 Դեռ շատ շուտ է մեռնելու:
 Ան իր արյունն իր քըրտինքով կը շահեր...
 Տե՛ր, ի՞նչ սըրտով կը կոտրես
 Թնն՝ որուն վրա կը թըռթընին մանուկներ
 Եվ ծընողքներ ձյունագես:

Դուրսն արևին, գեփյուռին տակ կ'ուռճանան՝
 Բախտավորներն աննիագ.
 Արտին մեջ աստղն ավշի ելքին կը ժըպտի.
 Տե՛ր, զինք ինչո՞ւ կը մոռնաս:
 Այդ բազուկներն աշխատանքի համար են՝
 Ո՛չ մահվան դեմ կըռվելու:
 Բախտը խուցին մեկ անկյունեն կը խընդա
 Օձի ժըպտով մ'ահարկու:
 Պիտի մեռնի. խիստ մահացու հիվանդցավ.
 Եվ պատանքին մեջ երբեք
 Պիտ' չը տանի սիրելիի մ'արցունքներն
 Ու սև ուխտերն հուսաբեկ:
 Պիտի մեռնի. և իր բընիկ լուսնին տակ,
 Հարսը սիրո ծարավով՝
 Պիտի գուր տեղ անոր գալուն ըսպասե...
 Խեղճ վանուհի, ապահով
 Հույսի ամեն խոստումներու վայելքին՝
 Կը ծիծաղիս աստղին հետ.
 Մինչդեռ կյանքին երկընքին վրա կը գրծվի
 Շանթը շողին գուգահետ:
 Որո՞ւն համար շուշանն ու վարդ փոխ կու տան
 Իրենց միացումն՝ այտերուդ.
 Ինչո՞ւ Վանա լիճն աստղերով կը վառի
 Նախանձելով աչքերուդ:
 Որո՞ւն համար հաջաղիդ տակ կը պահես
 Ըմբոստանքներն համբույրին...
 Վաղն, հե՛զ ծաղիկ, պիտի ճամբորդ մը գուժե.
 «Մեկ աչքը բաց թաղեցին»:

ԱՎԱԶԱՆԻՆ ՁՈՒԿԵՐՈՒՆ

Մըտածողի մը նըման
 Ջուրին միջև կը շըրջիք:
 Ա՛լ գծված է ձեր սահման,
 Ո՛վ լողակներ խատուտիկ:
 Հոս պիտի ա՛լ չը գըտնաք
 Անհուն, կապույտ այն աշխարհ,
 Որուն հորձանքն ու վըտանգ
 Կը կըտրելիք հեզնաբար:
 Ձերին ճարպիկ թներով՝
 Ազատություն, զվարթություն
 Կը գըրկելիք անվըրդով,
 Անգե՛տ՝ նենգող խայծերուն...
 Արհեստն արդ ձեզ կը պատե.
 Ավազան մ'հին, ձեզի նեղ,

Շատըրվան մ'ալ կրանիտե,
Եվ փոքրիկ ժայռ մը մեջտեղ՝
Որ գործ մըն է ձեռքերու:
Այս է ահա ձեր աշխարհ.
Ամբողջ այս է, ո՛վ աղու
Բանտարկյալներըս թըշվառ:
Երբ կը կայտռեք ջուրին վրա՝
Կը գվարճանա անխրոով
Անձնասեր մարդն՝ արծաթյա
Պըղպըջակներն դիտելով:
Ո՛ հ, ի բընե չար է ան.
Իր հաճույքին, իր փառքին
Կ'ուզե զոհել ամեն բան.
Բըռնավորն է աշխարհքին:
... Այս սև ժայռին խոռոչներ
Ձեր շիրիմներ պիտ' ըլլան,
Ուր կ'երկարին բողբոջներ՝
Բաղեղներու ցիրուցան:
Ուր ջըրերուն թըրթըմունք
Կու գան բախիլ մեղմորեն,
Ցընցըղկելով արտասուք՝
Ողբ ու հանգիստ կ'եղերգեն:
Ո՛վ իմ դըժբախտ անմեղներ,
Ճիշտ նըման է աշխարհս ալ
Ձեր այդ տեղին: Դեպի վե՛ր
Կը ջանա միտքս իմ ելլալ:
Կ'ուզե ուրիշ մեկ աշխարհ
Ան գըտնելու, ուր անհուն
Ազատությունն իշխե հար՝
Եվ անխարդախ բարություն:
Սակայն ի գուր: Լոկ բանտող
Գըծուծ նյութեր կան չորս դիս՝
Որ թըրիչներս աղամող
Կը ջախջախեն և հոգիս:
Առկայծ հույսով մ'ո՛ւր կ'երթամ.
Կ'երթամ նույն տեղըս գացած.
Հոս, կյանքն ու սև գերեզման
Իրարու ձեռք են տըված:
Օր մը ձեզի պես ե՛ս ալ
Պիտի իյնամ ցուրտ, անշունչ,
Մոռացոնքի մեջ մըռայլ.
Հոս ամեն բան է անուրջ:
Պիտ' լոռ ըլլաք, ես՝ հող.
Բայց ինձմեն եք երջանի՛կ,
Զի վըրանիդ միշտ լացող
Գեթ շատըրվան մը ունիք:

ԱՐՅՈՒՆՈՏ ՃՅՈՒՂԸ

«Հոն, ի՞նչ է ան՝ որ շուրթին վրա ջրերուն
Ինկած կու գա, օրորակումով մը կու գա.
Մըխրճելով մերթ ծրփանքի մեջ հնայուն
Կարծես բոցերն իր կը մարե՝ ճակտին վրա
Վառված կարմիր արևմուտեն...
«Այսպես հեքոտ, դանդաղորեն,
Ո՛վ մեծ գետին ջուրերեն, արդյոք ձեր շրթունք
Ի՞նչ բերեն՝ որք լեռներու ապալեր
Քրդանցքներուն միշտ սրփռելով արտասուք՝
Կարծես ցավե մ՛ կը խածխրծեն եզերքներ:
«Ո՛հ, լրոռոթյո՛ւն. ձեր լեզվեն չե՛ մ հասկընար.
Մի՛ մըրմընջեք ինծի բաներ հոգեհույզ,
Այլ, կըրկնակի վագրով, հասեք սըրավար՝
Նըման իմ կույս կարոտակեզ օրերուս՝
Որոնք անձայն կ՛անցնին կ՛երթան...
«Կանաչ ճյուղ մ՛ե ուղևորն այն՝
Որ կը ծրփա անդաստական, մոլորուն,
Ցըցված մեջտեղ փըրփուրներուն ըսպիտակ,
Ինչպես լանջքիս վրա կը ճոճի սուր դաշույնն,
Որ բաժանումը մըխեց խոր, դըժընդակ:
«Ո՛վ արմավի թափառական ճյուղն, ըսե՛,
Մեջն ալեհույզ ճամբորդությանդ ի՞նչ տեսար.
Կամ թե սըրտիս՝ որ միշտ հյուսեն կը խուսե,
Եվ պաշտումի մը բացական կու լա հար,
Արդյոք դու ի՞նչ լուր կը բերես...
«Մարտի փառքին ավետի՞ սն ես,
Մարտին որ միշտ դաշտերե դաշտ, լեռնե լեռ
Կատողած կ՛ոռնա՝ ինչպես որոտն երկնի վրան.
Հորիզոնին, ուր հագիվ իմ նայվածքներ
Կը թափառին, ան կը ձրգե քող մ՛արյան:
Քաջամարտիկըս արդյոք ի՞նչպես կ՛ընե
Ըսպառնանքին մեջ սուրերու փայլակին,
Կամ վրիժառու նիզակներե, տեգերե
Եվ լախտերե ձևակերպված՝ մահածին
Անտառներուն դեմ հանդիման...
... Ո՛հ, ի՞նչ մտածում է այս դաժան.
Ըրի՞ն այնպես, որ իր վեհ կուրծքն ինձ համար
Այլևս երբեք չը բաբախե, չը հուսա,
Որուն վըրա հանգիստ կ՛առնեք գըլուխս հար.
Լոկ այտերո՛ւս տակ ապրած էր անիկա:
Թե, իր ձեռքե՞ն կու գաս, բանբեր ալեխոռով.
Ի՞նչ, պարզեցի՞ն սահմանեն ներս թըշնամվույն
Դրոշակը սուրբ՝ գոր շինեցի իմ ձեռքով.

Կամ հաղթության ըրի՞ն հանդեսը ցընծուն.
 Խըմե՞ց ան իր և իմ կենաց:
 Ան պաշտպանե՞ց՝ ըսպաննըված
 Ծընողքներու հեզ մանուկներն անտերունջ,
 Կամ դյուցազներ՝ ինկած միայն սև բախտեն.
 Անոնց աչքին, թուրին փայլով թաթավուչ,
 Իր գըթության փայլն ալ ցըցո՞ւց վեհորեն:
 Եթե իր խրոխտ կորդակին հետ միասին
 Հոխորտեցի՞ր, կամ պըճնեցի՞ր հաղթական
 Լանջապանակն. եթե խիզախ ճակատին
 Դու ծըփացիր, եկուր, եկուր սըրտիս վրա՛ն
 Աճեցընեմ համբույրով քեզ»:

Ըսավ: Եվ բոց արևուն պես,
 Որ մերթ կ'իջնե ալիքներուն ծովին լուրթ,
 Կույսն հակեցավ, մեղմիկ, ջուրին վրա պայծառ,
 (Անդրադարձած թովիչ դեմքին իր՝ անփո՛ւյթ)
 Եվ վեր հանեց խուսափուկ ճյուղը դալար:
 Ու վեհերոտ, ինչպես եղնիկ մը սիրուն,
 Սուր ճիչով մ'ետ ընկըրկեցավ ան հանկարծ.
 Մեկդի նետեց ձեռքերեն ճյուղ՝ որուն
 Ցից ծայրին վրա, ավա՛դ, էին չորացած
 Կարմիր արյան մը նետվածքներ...
 Անոր համար գետը բոթբեր
 Լըռեց կարծես, չը ժըպտեցավ արեգակ.
 Խաշնահավն ա՛լ չէրգեց երգն իր խընդության.
 Կարծես դըրին կարմիր դագաղ մ'աչքին տակ.
 Հատակը՝ տեգ, և կափարիչը՝ վահան:

ՉՈՐՍ ՏԱՐԵԿԱՆԻ ՄԸ ՆԱՄԱԿԸ

Այս նամակն իմ եղբայրըս է գրեր. քա՛ղցր էակ՝
 Որ փոքր է դեռ. Էն իր համար քող չունի.
 Իր առջև դեռ մեծ գաղտնիքն է անդիմակ.
 Երանության ամեն երկինք՝ հուլանի՛ :
 Մերթ վարդերու, թըռչուններու անուրջե
 Ոգիներուն հետ կը խոսի անարգել.
 Փոքրիկ ձեռքով թիթեռնիկներ կը կանչե.
 Կ'ուզե աստղերն երկնի դաշտեն հավաքել:
 Երկամյա էր՝ երբ գատվեցանք տըխրալի.
 Մեկնումին զիս դիտեց ապշած ու երկա յն,
 Թե ինքը է՞ր կ'երթար, ես է՞ր կը մնայի,
 Եվ ո՛հ, լացա՛վ. մարդն էր՝ շնորհքին տակ մանկան:
 Արդ կը գըրե: Այդ նամակն ե՛ս կ'ըմբռնեմ.
 Չայն կ'հասկընա ի՛մ սիրտըս լոկ հուսաթափ,
 Իբրև թե այդ գիրն անծանոթ ու նըսեմ՝
 Մենք նույն ատեն գըտնեինք, նո՛ւյն ըզգացմամբ:

Հորիզոն մ'հարկ է որ ինքն ա՛լ պաղ աղոտ,
Զայն տան նրնջող արշալույսին. Ե՛լ ժամն է...
Զեփյուռ մ'որ թույլ հունտին հրծծե. Տո՛ւր ծրդոտ:
Մայր մ'որ տըղուն ըսե. Քալե՛ ... Հայր մ'որ՝ Գրե՛:
... Եվ սա թուղթին մանուկ մ'հակեր է քընքուշ,
Մանկան վրա հայր մը՝ ժըպտալով պեխին տակ.
Այսպե՛ս կ'իջնե արշալույսին ամպ մ'անուշ,
Արշալույսն ալ ձյունոտ դաշտին ըսպիտակ:
Ու գըրեր է: Տարօրինա՛կ նըշաններ,
Գիծե ր՝ որք ինձ թըվին երազ բեկբեկուն,
Ժպիտներով ցանված քըսված մելաններ,
Բիծեր՝ դըրված մանկան թափով մը նըկուն:
Սա մինարե մըն է դեռ կես մընացած՝
Ուր չ'ամփոփվիր հոգվո մ'աղոթքը համակ.
Հոն ծուռումուռ խաչափայտ մ'է գետեղված՝
Ուր կը գամվի խեղանդամ մարդ մը մինակ:
Հոս տեղ թըռչուն մ'ուրվագըծված է, լըռի՛կ,
Որուն երգերն իր շըրթունքներն են գողցեր.
Անդին կա հոնք մ'առանց աչքի, թափառիկ,
Իսկ ասդին աչք մ'առանց հոնքի, մերկ, անտեր:
Սա կիսկատար գըմբեթ մըն է, ձյունի վրա,
Որ կը սքողի ամպի մը տակ մելանե.
Վերջապես հո՛ն գոց կոկոն մ'է անիկա՝
Որ, վարն, անոր ըստորագիրն կը դընե:
Եվ ես ճաճանչ մը ասոնց մեջ կը գըտնեմ.
Պատկերական գըրություն մ'է՝ մենք որով
Կըրնանք կարդալ խորհուրդ-մանուկը վըսեմ՝
Մեր մութ երկնի՝ աստղ մ'օրեօր դընելով:
Պիտ՝ տարիներ կազմեն ամեն գաղափար՝
Երազը խոկ հորինելով օրեօր.
Մանուկը մարդ պիտի ըլլա, գիծը՝ բառ,
Տըրվելով կրոնն՝ մարդուն, բառին ոտ՛նավոր:
Ան՝ այժմյան այդ գաղափարներն մի քանի
Ժողվեց երկրես (թե երկընքեն չի բերեր).
Ժողվեց իր մոր գըրկեն, դըպրոց կենդանի,
Գըզվող սյուքեն, ծաղիկներեն տարուբեր:
Սոխակն ուսույց երգել, լալ՝ փուշը վարդին.
Ամփոփ թառած տատրակն ըսավ. Կը նիրհեն:
Բարձին ծաթող լուսնակն ըսավ. Կը ժըպտին:
Իր քունն հըսկող մայրն ալ ըսավ. Կը սիրե՛ն:

ԱՆՀԱՎԱՏԸ

Սև ագռավի մը ետևեն, գառ ի վար,
Արբշիտ հոգվով մ'ան կը վազեր ուժգնորեն.

Հեշտանքի մ'երգ իր շրթունքին կը թըրթոար՝
Որ կը թովե գաղտագողի քեզ իրե՛ն:
Անոր ըսի. «Հո՛ն, աղավնին տեսա՞ր ան՝
Որ ագռավին ներհակ թռիչքով կը սուրար.
Սուրբ աղավնին Անբրծության, Գիտության
Ու երկնային Միջոցներուն լուսատարը»:
Ուղղեց այնպես հեզնող ժըպիտ մը ինծի՝
Որ սել կ'ուզեր. «Կատա՞կ կ'ընես»: Եվ դարձավ:
Ու կը վազե ր, երբոր նորեն գոչեցի
Ետենն իր խոլ վայրէջքին սըրարշավ.
«Տեսա՞ր ծաղիկն՝ որ հակառակ վագրիդ՝ ան
Քեզ հակառակ կ'անցներ կ'երթար, չը թոռմի՛ւ,
Ծաղիկն Հույսի, Ճըշմարտության, Հեզության,
Որ է փրթթուն Արշալույսին փրթթուն ծիլն»:
Ան հուսահատ փույթով մ'հեծեց դառնորեն.
«Տեսա... Ո՛ւշ է: Ո՛հ, ոտքերուս բուռըն էջ
Կեցընել ա՛լ դըժվար է այս դարվարեն»:
Եվ գահավիժե՛ց, գերդ կույր, կյանքին ճամբուն մեջ:

ԵՐԱԶ և ԽՈՀ

Պառկած էի. խոր լըռությո՛ւն. գիշեր էր...
Ճըրագս յուղե պատերն արյուն կը ներկեր:
Ծանրացավ մըրափի մ'աչքերուս.
Մըտածումնե՛րըս երագի մեջ սուզան,
Եվ բիբերես ամեն ճաճանչ լուսական
Կոպերուս վրա՛ տըվին խույս:
Սև դեմքի մ'հետ ձեռք մը տեսա մահճիս քով.
Կուրծքիս դըրավ մատերը բոց եղունգով,
Մընդիկի պես խորամուխ:
Փայտ կըտրեցավ լեզուս. վախցա՛ շեկ աչքեն:
Ես ճանչցա գայն. սատաններուն ամենեն
Կատաղին էր՝ մ'է՛ն թուխ:
Բացավ բերանն՝ որուն մեջ լինդ միայն կար.
Իր ակռաները խորտակված էին վար
Իյնալու օրն երկընքեն...
Ըսավ. – «Մըրտե՛ դ, սըրտեդ քաշել ես եկա
Զայն՝ որուն տեղն իմ տեղըս պետք է ըլլա.
Տո՛ւր, ինծի՛ տուր սերդ իրեն»:
Անկողնիս մեջ թայթըլեցա, ու երկու
Ձեռքով՝ սարսուռն բըռնեցի թնն ահարկու՝
Ինձմե անդին մըղելով:
Մաքառեցա Անոր համար, անկրոննե՛ր.
Խածեցի ձեռքն՝ որ Զինքն ինձմե կ'անջատեր.
Իր ոտխին արյունով՝

Ներկեցի շուրթս, և անցուցի ծարավս հուր:
Դնն երեսիս կատղած պոռաց. «Տեղի՛ տուր՝
Թե չէ ըզքեզ կը խեղդեմ.
Թոքերուդ տակ կը ճըմլեմ սիրտդ անխընա.
Ճերմակ սավանդ վաղը կարմիր կը դառնա.
Մա՛ հը կ'հանեմ քեզի դեմ:
Ագռավներու կեր կու տամ այդ սև աչքերդ.
Քաղցած օձի բերաններու երակներդ
Կը հանձնեմ ես. տեղի՛ տուր:
Կը գողնամ քարն գերեզմանիդ վըրայե,
Որպեսզի մա՛ ըզքեզ բընավ չարտասավե,
Անգութ եմ, տե՛ս. տեղի տուր»:
Պիտի չըտա՛մ: Կըսմըթեցի, կըռփեցի
Թնն՝ որ ոսկրերս կը խորտակեր գերդ խեցի,
Եվ մասներովս անխընա,
Բըզիկ բըզիկ ճանկըթեցի դեմքն անոր,
Դողդըղացի, տառապեցա քըրտնաթոր,
Եվ սուր ճիչով մ'արթընցա...
Ա՛հ, արթընցա: Եվ միտքըս շուտ մ'ըշտապեց
Սըրտիս վըհին. դեռ Ան հոն տեղ էր, անեղծ,
Յոթն արևի նըման ջերմ:
Դնն եղունգով լանջքըս շերտած էր տեղ տեղ.
Ուրախ էի՝ որ եղա գրահ մ'արյունհեղ
Անոր համար, Անոր դեմ:
Ո՞վ պիտ' կըրնար փետել հանել Ջայն սըրտես՝
Ուր (ինչպես ա՛ստղը կապույտին ծոցեն ներս)
Ագուցված է ա՛յնքան խոր:
Իր խարիսխներն ալի ք մ'ըն ալ չի շարժեր,
Չի անհունին և բընության են կառչեր
Անոնց ճանկե՛րը հըզոր:
Վասընզի իր սուրբ Էությանն հաստատման՝
Բյուր բյուր աստղեր մեյմեկ հրաշեկ գամ եղան,
Եվ իր հետն ենք մե՛կ խըմոր.
Վասընզի սուրբ Ավետարանն իր ամեն
Մեկ էջով՝ միշտ ծորեց Անոր երակեն
Արյո՛ւն մ'արյանս մեղավոր:
... Անդունդ մ'է Ան գույգ որկորով անսահման՝
Որոնց մեկեն դուրս կը պոռթկա Ապագան
Անցյալ եղած մյուսին մեջ,
Եվ, կեղրոնն, ինքը ներկան է, որուն շուրջ
Ժամանակն իր ճիշտ ոլորտովն, անմըռունչ,
Կ'ընե անդուլ ելևէջ:
Եվ այսպես, մեր աչքեն, մըտքեն իսկ անդին,
Ան՝ իրեն չափ, իրեն միջև, յուրովին,
Է հավիտյան և անհուն.
Ան՝ Ամբողջն է, որուն անունն պարծանքով

Կը հանձնեն այս մաքուր թուղթին սըրտիս ծով՝
Որ իր հայլին է տրոփուն:
Թող գըրաշարը դողդոջե՝ երբ Անոր
Անվան տառերն իյնան ձեռքին տակ անգոր.
Չը շարե՛ ծուռ կամ անտաճ...
Եվ մամուլն ալ՝ այդ անվան վրա բըրտորեն
Թող չը ճընշե՛ թե չէ կ'հերձի սև կուրծքեն,
Վասընզի Ա՛ն է. – *Աստված*: